

ՍԱՀՄԱՆԱԿԱՆԻ ՆԵՐԿԱ ԵՎ ԱՆՅՅԱԼ ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ
ՊԱՏՄԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ¹

Ս. Մ. ԱՆԹՈՍՅԱՆ

Մեր հին լեզվի սահմանական եղանակի պարզ ժամանակները երեքն են. ներկա, անցյալ անկատար և անցյալ կատարյալ: Գրաբարի շատ քերականներ ի թիվս սահմանականի պարզ ժամանակների դնում են նաև անցյալի հիմքի վրա-(ի)ց, -ցես, -ցէ, -ցուֆ, -ջիֆ, -ցեն (ներգործած), -(այ)ց, -ցիս, -ցի, -ցուֆ, -ջիֆ, -ցին (կրավորած) վերջավորությունների ավելացումով կազմված ժամանակածեր: Այդպես է վարվում նաև պրոֆ. Հ. Աճառյանը²:

Ներկա ժամանակում մեր հին լեզվի դիմային վերջավորություններն են. -մ, -ս, -յ, -մֆ, -յֆ, -ն: Հայերենի հնդեվրոպական բնույթին համապատասխան, դիմային այս վերջավորությունները ծագել են հնիս. համապատասխան ձևերից, այն է՝ -մ-ն հնիս. անբուն -mi ձևից, -ս-ն՝ essi ձևից, -յ-ն՝ -ti վերջավորությունից՝ հնիս.— գրաբար t>: հնչյունափոխությանը համապատասխան (հմտ. լատիներեն pater—հայր): Հոգնակի առաջին և երկրորդ դեմքերի f-ն³ հայերենի հոգնակի վերջավորությունն է, ուստի այդ դեմքերի բուն վերջավորություններն են համապատասխանաբար -ս, որ առաջացել է հնիս. -mes ձևից և -յ, որ առաջացել է -the -te ձևից: Եվ քանի որ այս բայաձևերը նույնական են ստացվում եզակի 1-ին և 3-րդ դեմքերի հետ, ուստի հայերենն ավելացրել է նաև f: Եվ վերջապես, հոգնակի 3-րդ դեմքի -ն վերջավորությունն առաջացել է հնիս. -nti-ntai ձևից⁴:

Գրաբարի հինգ խոնարհումներին համապատասխան դիմային այս վերջավորությունները դրվում են բայահիմք + խոնարհիչ ձայնավոր ձևերի վրա.

սիր + ե + մ	դատ + ի + մ	զգ + ա + մ	զեն + ու + մ	գո + մ
սիր + ե + ս	դատ + ի + ս	զգ + ա + ս	զեն + ու + ս	գո + ս
սիր + ե + յ >	դատ + ի + յ >	զգ + ա + յ	զեն + ու + յ >	գո + յ
սիր է	դատի		զենու	
սիր + ե + մք	դատ + ի + մք	զգ + ա + մք	զեն + ու + մք	գո + մք
սիր > ե + յք >	դատ + ի + յք >	զգ + ա + յք	զեն + ու + յք >	գո + յք
սիր էք	դատիք	զգ + ա + ն	զենուք	գո + ն
սիր + ե + ն	դատ + ի + ն		զեն + ու + ն	

¹ Հայտնի է, որ այս երկու ժամանակների պատմական զարգացումը նույնական է, ուստի շարադրանքի ընթացքում կրկնություններից խուսափելու համար քննում ենք միասին:

² Տե՛ս Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների, հատ. IV Ա, Երեւան, 1959, էջ 302 և այլուր:

³ Հայտնի է, որ լեզուներում գոյականը և բայը կարող են նույն հոգնակերտներն ունենալ. այս իմաստով հետաքրքրական է թուրքերենը (հմտ. kitab-kitablar «գիրք-գրքեր», al-di-aldilar «առավ-առան», ei-eller «միս-մսեր», sevd-sevdiler «սիրեց-սիրեցին»):

⁴ Տե՛ս Հ. Աճառյան, Նշվ. աշխ., էջ 371—372:

Այսպես նաև Ե, Ի, Ա, Ո՛ խոնարհումների⁵ ածանցավոր ձևերում.

արկ+ան+ե+մ	սկս+ան+ի+մ	զարմ+ան+ա+մ	զրօս+ն+ու+մ
արկ+ան+ե+ս	սկս+ան+ի+ս	զարմ+ան+ա+ս	զրօս+ն+ու+ս
արկ+ան+ե+յ>	սկս+ան+ի+յ>	զարմ+ան+ա+յ	զրօս+ն+ու+յ>
արկանէ	սկսանի		զրօսնու
արկ+ան+ե+մք	սկս+ան+ի+մք	զարմ+ան+ա+մք	զրօս+ն+ու+մք>
արկ+ան+ե+յք>	սկս+ան+ի+յք>	զարմ+ան+ա+յք	զրօս+ն+ու+յք>
արկանէք	սկսանիք	զարմ+ան+ա+ն	զրօսնուք
արկ+ան+ե+ն	սկս+ան+ի+ն		զրօս+ն+ու+ն

Վերոհիշյալ ձևերը հնչյունական փոփոխությունների իմաստով ևս կատարյալ վիճակ են ներկայացնում: Ն խոնարհիչի հետ չ դիմային վերջավորությունների տված ե+յ> և հնչյունափոխությունը հարադատ է հայերենին. այսպես նաև Ի և ու հնչյունների մոտ յ-ի անկումը՝ յ-ւ, Ի-ւ հնչակցության պատճառով⁶:

Անցյալ անկատարի վերջավորություններն են՝ -ի, -իւ, -յւ, -աւ, -իւ, -ին: Հ. Աճառյանը, զոհացուցիչ շհամարելով անկատարի ծագման վերաբերյալ Մեյերի տված բացատրությունը, գտնում է, որ «անկատար կազմող իսկական մասնիկն է չ»: Եվ քանի որ ըստ համեմատական հնչյունաբանության հայերեն չ առաջանում է չ-ից, ուստի այդ մասնիկը կապում է զերմաներենում անկատար կազմող է մասնիկի հետ: Այսպիսով, հայերենն օգնում է պարզելու, որ հնիւ. «անկատարի կազմության զանազան ձևերի մեջ կար նաև չ-ով կազմված մի ձև»⁷:

Ահա չորս խոնարհումների անցյալ անկատարի պատկերը.

Սիրէի	դատէի	զգայի	զենուի
սիրէիր	դատէիր	զգայիր	զենուիր
սիրէր	դատէր	զգայր	զենույր ⁸
սիրէաք	դատէաք	զգայաք	զենուաք
սիրէիք	դատէիք	զգայիք	զենուիք
սիրէին	դատէին	զգային	զենուին

Իսկ զոչ պակասավոր բայի վկայված 3-րդ դեմքի ձևերը համապատասխանաբար լինում են՝ զոււ, զոչին: Վերևում ցույց տրված հնչյունական օրենքին համապատասխան չ մասնիկը ջնջվում է Ու խոնարհման մեջ:

Նախաձևերը պիտի լինեին.

զենույի	զենույաք
զենույիր	զենույիք
զենույր	զենույին

5 Դոլ բայը Ո խոնարհման միակ ներկայացուցիչը լինելով՝ բնականաբար ածանցավոր ձև չունի: Մյուս կողմից՝ որպես միավանկ բայ, խոնարհիչը ձուլվել է բայահիմքին:
6 Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., հատ. VI, Երևան, 1971, էջ 372:
7 Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., հատ. IV, Երևան, 1961, էջ 526—527:
8 Այստեղ գեղեցիկ բացատրվում է չ մասնիկը, որի պատճառով էլ ու խոնարհիչը հնչյունափոխված է ո-ի:

Նկատի ունենալով, որ Ա, Ը խոնարհումներում է առաջացել է նախ միացությունից, ուստի այդ խոնարհումների նախաձեռնողները է վերականգնել հետևյալ կերպ.

*սիրելի	*սիրելյաք	*դատելի	*դատելյաք
*սիրելիր	*սիրելիք	*դատելիր	*դատելիք
*սիրելյր	*սիրելին	*դատելյր	*դատելին

Ինչպես կարելի է տեսնել, ա խոնարհիչի մոտի չեզոք դիրքում իր նախաձեռնողի հետևյալ պահված է Գ-ն բոլոր ձևերում⁹:

Դիտված է, որ հնիս. բարբառներն ընդհանրապես աշխատել են պարզեցնել նախալեզվի խոնարհման համակարգի լաբիալիզմը: Դրա լավագույն օրինակը մեզ տալիս է հայերենը, որը, ի տարբերություն հունարենի համակարգի, անշափ դեռել, բյուրեղացրել, միօրինակացրել է խոնարհման համակարգը: Պետք է ասել, որ այս իմաստով զրաբարը մեծ առավելություն ունի աշխարհագրի համեմատ: Այսպես ասելով մենք, անշուշտ, նկատի ունենք խոնարհման կազմությունը և ոչ կիրառությունը: Ինչ չէ՝ զրաբարի նախանցյալ անկատարը, ապա և ներկան կիրառության մի այնպիսի խառնակ վիճակ են ներկայացնում, որ ընդհանրապես պատճառ դարձան հին հայերենի խոնարհման համակարգի տակնուվրայության ու փլուզման: Ահա այս հարցերի մասին էլ խոսելու ենք ստորև:

Եթե կարելի է խոսել հին հայերենի անցյալ կատարյալ ժամանակի և հրամայականի՝ դարերի ընթացքում կրած փոփոխությունների մասին, ապա այս իմաստով չի կարելի խոսել զրաբարի ներկայի և անցյալ անկատարի մասին, քանի որ լեզվի՝ երևույթները պարզեցնելու բնականոն ձգտումին համապատասխան զրաբար վերաճեցին բոլորովին մի այլ և՛ ճանաչակի ձևերի: Կարճ ասած՝ զրաբարի ներկան և անցյալ անկատարը դարձան ըզձականի ներկա և անցյալ (ապառնի և անցյալ):

Նախ ասենք, որ հին հայերենի ներկան ներկա է, այսինքն՝ առավել ընդհանուր ձևակերպումով՝ «ցույց է տալիս մի տեղական եղելություն, որ ընկնում է խոսելու վայրկյանին և դեռ շարունակվում է հարաձիգ, չի վերջացած»¹⁰: Ինչպես՝ «Սէր երկայնամիտ է, քաղցրաճայ. սէր ոչ նախանձի, ոչ ամբարհաւանէ, ոչ հաւաքտաճայ, ոչ յանդգնի, ոչ խնդրէ զիրեն, ոչ գրգռի, չձխորհի զշար, ոչ խնդայ ընդ անիրաւութիւն, այլ խնդայ ընդ ստուգութիւն. ամենայնի տւոէ, ամենայնի հաւատայ, ամենեւին յուսայ, ամենայնի համբերէ: Սէր ոչ երբեք անկանի...» (Թուղթ առ Կորնթացիս, Ա, 4—8)¹¹: Եվ կամ՝ «Ընդէ՞ր ոչ դուք զրկիք... այլ գուք զրկէք և ճեղէք. և այդ՝ զեղբարս ևս» (նույն տեղում, Է, 7—8):

Վերոհիշյալ նախադասություններում ընդգծված բոլոր բայաձևերը ներկա ժամանակով են և ներկայի իմաստով են գործածված, այդ են վկայում նաև այդ նախադասությունների այլ լեզուներով թարգմանությունները: Այսպես նաև անցյալ անկատարը. մեր հին լեզվում առկա է կիրառության մի այնպիսի ձև, որը խոսելու վայրկյանին արդեն անցած է,

⁹ Տե՛ս Ը. Ա ճ ա ո յ ա ն, նշվ. աշխ., հատ. IV, էջ 524—529:

¹⁰ Տե՛ս Մ. Ա ր և զ յ ա ն, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 559:

¹¹ Տե՛ս Աստուածաշունչ մատեն Հին և Նոր կտակարանաց, Կ. Պոլիս, 1895:

բայց մի անցյալ ժամանակակետում դեռ շարունակվում է, չի վերջացած»¹²։ Ինչպես՝ «Ընդ եղեգան փող ծուխ ելանէր, Ընդ եղեգան փող բոց ելանէր, Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ» (Խոր., էջ 86)։ Եվ կամ՝ «Եւ ծուխ ելանէր յաւիտեանս յաւիտենից» (Յայտն., ԺԺ 3)։ «Իսկ Շապուհ արքայ առեալ զձեռանէ նոր շրջէր ճեմելով» (Բուզ., էջ 253)։

Աշխարհի լեզուների բայի ժամանակների քննությանը նվիրված բաժնում Հ. Աճառյանը ճշտորեն նկատում է, որ «ժամանակի գաղափարը խախտւում է, և նրանք կարող են հաճախ իրար տեղ գործածվել»¹³։ Ռուսերենում, օրինակ, -а́л վերջավորությամբ անցյալ ձևով արտահայտվում են միաժամանակ և՛ անկատարը, և՛ կատարյալը, և՛ վաղակատարը, ընդ որում տարբերակման միակ միջոցը գործողության ավարտված (совершенный вид) և դեռ շարունակելի լինելը (несовершенный вид) ցույց տալն է. *написал*՝ я писал—գրում էի, գրել եմ, գրել էի

я написал—գրեցի

я говорил—ասում էի, ասել եմ, ասել էի

я сказал—ասացի և այլն։

Լեզուներում առավել ևս նույնանում են սահմանականի ներկա-անցյալ անկատար և ստորադասականի ապառնի -անցյալ ապառնի ձևերը։ Արևելահայ գրականում իսկ, որտեղ ժամանակների կիրառությունները որոշակիորեն սահմանազատված են, կարելի է գտնել նման կիրառություններ, օրինակ՝ Ամառը ծովափ ենք գնում (ներկան՝ ապառնու փոխարեն)։ Այսպես և գրաբարում. «ժամանակ իմ մերձեալ է, առ քեզ առնեմ (=առնելու եմ, կատարելու եմ) զզատիկն աշակերտօքս հանդերձ» (Մատթ. ԻԶ 18)։ Ռուս. Время Мое близко; у тебя совершю пасху с учениками Моими¹⁴։ «...եթէ ոչ գիտէք զի սուրբք զաշխարհս դատին եւ եթէ ձեւք դատր զաշխարհ. ապա ոչ էք արժանի անարգ ատենից։ Ո՞չ գիտէք եթէ զհրեշտակս դատիմք» (նույն տեղում, Զ, 2—3)։ Մյուս կողմից՝ հայտնի է, որ արևմտահայ գրականը սահմանական և պայմանական ներկա-անցյալի համար նույն ձևերն է օգտագործում։ Իվ ընդհանրապես այս երևույթն ուղեկցել է հայերենին իր գոյության ամբողջ ժամանակաընթացքում։ Ընդհանրապես լեզուներում նկատվող «ժամանակի խախտություն» ընդհանուր երևույթից բացի հայերենում կար նաև մեկ ուրիշ հիմնավոր պատճառ. գրաբարը ստորադասականի անցյալի ձևեր չունեն. այսինքն՝ գրեցեմ, գրեցից ձևերն իրենց անցյալի արտահայտությունը չունենին։ Այլ լեզուների հետևողությամբ հայերենին նման ձևեր պարտագրելու փորձերը հաջողությամբ չպսակվեցին։ Սակայն դրսևորման հատուկ ձև չունենալը ժամանակի գաղափարի շարտահայտվելուն պատճառ չէ. եթե դա լեզվի մեջ կա, ապա այնուամենայնիվ դրսևորման ձև գտնում է։ Եվ իրոք, գրաբարի դասական շրջանի մատենագրության մեջ փնջերով կարելի է ցույց տալ անցյալ անկատարի՝ ստորադասական անցյալի իմաստով կիրառություններ. ինչպես՝

¹² Տե՛ս Մ. Արևելյան, նշվ. աշխ., էջ 559։

¹³ Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., հատ. IV Ա, էջ 48։

¹⁴ Տե՛ս Библия или Книги священного писания Ветхого и Нового завета, изд. Московской патриархии, Москва, 1956.

«Արդէն իսկ յաղեալ իցէք և արդէն մեծացարուք, առանց մեր թագաւորեցէք, և ևրանի թէ քաղաւորէիք զի եւ մեք ընդ ձեզ քաղաւորէաք» (I Թուղթ առ Կորնթ., Դ, 8): «Իսկ արդ ո՞ւր է երանութիւնն ձեր. վկայեմ ձեզ, եթէ հնար ինչ էր, զաչս ձեր հանէիք եւ տայիք ինձ» (Թուղթ առ Գաղ., Դ, 15): «...Եւ զմիսն եթէ սիրաւ ուրուք առնոյր եւ ուտէր՝ ոչ վնասէր. որպէս վարազի՝ որ դազանագոյն է քան զամենայն գազանս՝ ուտի միսն, եւ ոչ վնասէ, նոյնպէս եւ նոցայն՝ եթէ ուտէր որ՝ չվնասէր» (Եզնիկ, էջ 47): «Բայց թէ գիտէի՝ թէ յայսմ հետէ կայցէ յուխտին իմում եւ ի հնազանդութեան բարեաւ ուխտիւ, մեծապէս մեծարանօք արձակէի զնա խաղաղութեամբ յիւր աշխարհն» (Բուդ., էջ 251):

Վերևի նախադասութիւններում ընդգծված բոլոր բայաձևերը անցյալ անկատարով են դրված, սակայն ստորադասական անցյալի իմաստ են արտահայտում:

Պետք է ենթադրել, որ սկսելով անցյալ անկատարից՝ երևույթը տարածվեց նաև ներկայի վրա: Եթե անցյալ անկատարը կարող էր արտահայտել ստորադասական անցյալ, ապա համաբանութեամբ ներկան էլ կարող էր արտահայտել ստորադասական ներկա: Նույնպես դասական շրջանից փնջերով ավանդված են սահմանական ներկայի՝ ստորադասական ներկայի իմաստով կիրառութեան դեպքեր. ինչպես՝ «Բայց նախանձաւոր լերուք շնորհացն որ լան են. այլ ես առաւել եւս ճանապարհ ցուցանեմ ձեզ (I Թուղթ առ Կորնթ., ԺԲ, 31): «Եթէ համբերեմք, ընդ նմին եւ թագաւորեսցուք. եւ եթէ ուրանամք, եւ նա ուրանայ մեզ» (II Թուղթ առ Տիմ., Բ, 12): Այսպէս նաև՝ մեր մատենագրութեան մեջ. «Զցլու միս ուտել՝ դարման է մարմնոյ, բայց եթէ զարիւնն որ ըմպիցէ՝ սատակի» (Եզնիկ, էջ 47): «Յորժամ արգելուս եւ փակես զամենեւեան ի հեռաւոր օտարութեան, կատարին խորհուրդք կամաց քոց, եւ որպէս երեւիս մեզ ի դէնիս մերում, տիրես դու եւ երկրին Քուշանաց, եւ Յոնք իսկ սչելանեն ընդ քո իշխանութիւնդ» (Եզնիկ, էջ 9): «Բայց եթէ ի մի օրէնս դարձուցանես զամենայն ազգս և ազիսս...» (նույն տեղում):

Ինչպես բերված նախադասութիւններից երևում է, սա ընդհանուր մի երևույթ է գրաբարի համար և երբեք էլ ճիշտ չէ կարծել, որ «այս կերպ ապառնին կամ ստորադասականը դեմ առ դեմ խոսակցութեանց համար կը բանեցընեին հին նախնիք»¹⁵:

Ինչպէս որ սահմանականի ներկան ու անցյալ անկատարը կիրառվում էին ստորադասականի իմաստով, նույն ձևով էլ ստորադասականի 1-ին և 2-րդ ապառնիները կիրառվում էին սահմանական ներկայի, այլև անցյալի իմաստով:

Այսպէս էր վիճակը գրաբարի գրի առնվելու ժամանակաշրջանում: Սակայն լեզուն ձգտում է պարզութեան: Ահա ինչու մեր մատենագիրները ներկայի իմաստն առավել հստակ դարձնելու համար բայաձևին կից սկսեցին օգտագործել զանազան մակբայներ, ինչպէս նաև բայական հարադիր ձևեր: Այդ միջոցներից մեկն էր, կարծում ենք, դեռևս դասական շրջանում կալ «կանդնել» բայի հարադիր կիրառութիւնը մնալ բայի հետ: Քանի որ կալ «գոյութիւն ունենալ» պակասավոր բայ է, ուստի մեզ ավանդված օրինակ-

¹⁵ Տե՛ս Ա. Այտընյան, Քննական բերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Վիեննա, 1866, էջ 74:

ների մեջ 1-ին և 2-րդ դեմքերի բայերը կալ բայի ձևեր են: Իսկ ինչ վերաբերում է 2 թվի էլ 3-րդ դեմքին, ապա թեև բառական հոմանիշության պատճառով դժվար է պնդել, բայց պետք է կարծել, որ Աստվածաշնչում վկայված հետևյալ օրինակներում կալ բայի ձևերն ունենք:

«Աստուած կալ եւ մնայ յաւիտեան» (Սաղ., Ը, 8):

«Կալ եւ մնայ յաւիտեան առաջի Աստուծոյ» (Սաղ., Կ, 8):

«Իսկ ուղիղք իմաստունս խորհեցան, եւ խորհուրդն այն կայ՝ մնայ» (Ծաւյի, ԼԲ, 8):

«Կալ մնայ քահանայ մշտնջենաւոր» (Առ. Եբր., է, 3):

Ուր կան եւ մնան» (նույն տեղում, Ժ, 34):

«Եւ զոր օրինակ կալ մնայ մարդկան մի անգամ մեռանել» (նույն տեղում, Թ, 27):

«Այսուհետեւ կալ մնայ ինձ սրդարութեան պսակն» (II Տիմ., Դ, 8):

«Ամենայն ինչ նոյնպէս կալ մնայ ի սկզբանէ արարածոց» (II Պետ., Գ, 4)¹⁶:

Այսպես, ուրեմն՝ ներկայի ձևի մեջ ներկայի իմաստի արտահայտության միջոցներից մեկն էր սա, որ ժամանակին Ա. Այտընյանի արտահայտությամբ «սահմանազատիչ» դեր պիտի կատարեր գրաբարի և միջին հայերենի միջև: Միջին հայերենը ստեղծեց և կիրառեց ներկա և անցյալ անկատարի համար բոլորովին նոր ձև՝ գրաբարյան ներկան ու անցյալ անկատարը օգտագործելով ստորադասական եղանակի (ըղծական) իմաստով, քանի որ արդեն գործածությունից դուրս էին եկել ստորադասական 1-ին և 2-րդ ապառնիի ձևվերը: Ծիշտ է, միջին հայերենում դեռ օգտագործվում էին գրաբարյան ներկան ու անցյալ անկատարը և հաճախ նույն նախադասության մեջ իրար կողք-կողքի. ինչպես՝ «Աչքն խորանայ, եւ աչաց գութն դաբտկի, եւ ի յաչքն ձպուռ լինի. եւ կոպքն թուլանան. եւ ի վայր քաշվին, զերդ մարդոյ որ կֆայ եւ ի քուն կամի լինել... Եւ ճակտին կաշին քաշի, եւ քնքերն ի ներս երթայ. եւ փորն փարփուտ եւ դատարկ կեռեցայ» (ՄՀՁՄ, էջ 39): Մեր հաշվումներով Սմբատ Գունդստաբլի «Դատաստանագրքում» և Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարութիւն» աշխատության մեջ այդ հարաբերությունը մեկի դիմաց քսան է՝ հօգուտ գրաբարյան ձևերի: Սակայն XII դարից սկսած կու մասնիկով ներկան ու անկատարը համատարած կիրառություն ունեն, իսկ գրաբարյան ձևերը պարզապես հնաբանություններ են:

Ըստ Ա. Այտընյանի «մենք ԺԲ դարու մեջ կը գտնենք առաջին անգամ այս կու մասնիկս»¹⁷: Միջին հայերենի հմուտ հետազոտող, օտար հայագետ Յ. Կարստի կարծիքով ևս կու մասնիկն առաջին անգամ մեր մատենագրության մեջ երևում է XII դարում: Ըստ Կարստի, որին և վկայակոչում է Հ. Աճառյանը¹⁸, բժշկապետ Մ. Հերացին «Ջերմանց մխիթարության» մեջ կու մասնիկն օգտագործել է երկու անգամ՝ կու գայ (էջ 48), կու լինի (էջ 61, 91):

¹⁶ Տե՛ս Թ. Աստուածատուրյան, Համաբարբառ Հին և Նոր կտակարանաց, Երուսաղեմ, 1895:

¹⁷ Տե՛ս Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 75:

¹⁸ Հ. Աճառյանը միջին հայերենը հատուկ ուսումնասիրության նյութ չի դարձրել: Ե՛վ «Հայոց լեզվի պատմությունը», և՛ «Եկեղատար քերականությունը» շարադրելիս Հ. Աճառյանը օգտագործել է Կարստի Historische Grammatik des Kilikisch-Armenischen (Մտրասրուդը 1901 թ.) աշխատության փաստերը:

Սակայն, ինչպես ճիշտ կերպով նկատել է Ա. Մարգարյանը¹⁹, «օտար հայա-դետր չի նկատել այդ մասնիկի կիրառության նաև հետևյալ դեպքերը. կասե՞ն («...հումայի մուհրիզայ կասեն», էջ 4), կանէ («Այս ցաուս թէզով ճար ա-րա, թէ շէ սքթայ կանէ», էջ 8), կուտկարանայ («Եւ երբ իմանաս, որ օր քան զօր երակն կուտկարանայ...», էջ 34), կերե՞նայ («...եւ փորն փարփուտ և դատարկ կերենայ», էջ 39), կու՞ֆայէ («...խասիաթով դերկաթն կուքաշէ, էջ 120), կու՞մանտրեն («...Թուի թէ կումանտրեն զոսկերքն», էջ 122):

Կու մասնիկը լայն չափով օգտագործում է նաև XII դարի մեկ ուրիշ հեղինակ՝ Ներսես Շնորհալին. ինչպես՝

«Յափիկն ունէր տաճկի խընկիկ

Ու ի շուրջ կուգայ զետ փերեզիկ» (ՆՇԲՁ, էջ 565):

«Հետ կու կանչէ զետ ըզզեհետ» (ՆՇԲՁ, էջ 570) և այլն:

Գրաբարյան ներկա, անցյալ անկատար բայաձևերի հետ միասին XII—XIV դդ. բովանդակ միջին հայերեն գրականության մեջ (թե՛ գրաբարախառն միջին հայերենում և թե՛ «ուսկախառն» կոչված գրաբարում) լայն չափով օգտագործված ենք գտնում այս մասնիկը, ինչպես՝ «Ամէն ազգ եւ երկիր ի-րենց հաշվովն եւ ժմովն տօն կու անեն... եւ մէկ եւ ընդ որ կու երթան տօն-քըն...» (ՍԳԴ, էջ 30): «Եւ թվենայ բժշկին, երբ զերակն բռնէ, թէ կու փոխ-փոխի տեղոջէ ի տեղ» (Գրիգորիս, Քնն., էջ 4):

«Ես Կոստանդին, որ գըրեցի,

Կու փափագիմ ի յայն լուսոյն...» (ԿԵԲ, էջ 130):

Ունենք նույնիսկ պիտիմ բայի ներկան կու-ով:

«Թագաւորին այն կու պիտի, որ իւր ծառայն ոչ սըղալի» (ՖԴ, էջ 290):

«Երկու ցեղ սէր կայ ի հաւս, զայս աղուոր գիտնալ կու տիտի» (ՖԴ, էջ 491):

Առատ չափով ունենք նաև կու մասնիկի կը. կ հնչյունափոխված ձևերով կիրառություններ, մի բան, որ վկայում է մասնիկի լայն գործածության և մաշման մասին. ինչպես՝ «Յորժամ բորբոսն ի ներքս ի յերակսն լինի ի յա-րեն՝ ի յար եւ ի սուր եւ այրեցող ջերմանն, համայի մուհրիզայ կասեն» (ՄՀՁՄ, էջ 4): «Եւ ես գիրկ առնէի զլուսնկին շուքն՝ բռնէի եւ ի վայր կիջնայի ի տունն եւ բան մի կասէի, որ ինչ գեղեցիկ դումաշ կայր ի տանն, նա ամէնն ինձ կերեւաւ...» (ՎԱԱ, էջ 298), Այսսրես նաև՝ «կասես» (ՖԴ, էջ 270), «կու-զէ», «կասեն» (ՀԵԲ, էջ 150, 163) և այլն:

Կարելի է ենթադրել, որ կու մասնիկի ու ձայնավորն սկզբում սղվել է ու ձայնավորով սկսվող բայաձևերից առաջ՝ կից վանկերի նույնության անբա-րեհնչյունության հետևանքով, ինչպես՝ կու ուզեմ—կուզեմ, կու ուտեմ—կու-տեմ և այլն, իսկ հետագայում երևույթը տարածվել է ընդհանրապես ձայնա-վորով սկսվող բոլոր բառերի վրա: Այսօր էլ արեւմտահայ գրականում և մի շարք բարբառներում գալ, լալ, տալ միավանկ բայերը կու մասնիկն են ստա-նում (կուգամ, կուլամ, կուտամ), իսկ արեւելահայ գրականում առանց այդ էլ շատ կրճատված կը մասնիկը ուղղակի ավելանում է բայաձևերի վրա (և՛ ձայնավորով, և՛ բաղաձայնով սկսվող՝ կասեմ, կգրեմ)՝ ճիշտ է, արտա-

¹⁹ Տե՛ս Ա. Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966:

հայտելով պայմանական եղանակի իմաստ։ Այտընյանը հանձնարարելի չէր համարում այս՝ գրելով. «Ինքնին յայտնի է րսածներնէս, եւ ոչ շատ խորին բանասիրութիւն պէտք է իմանալու համար թէ արդեօք ներելի՞ է մեզի այսօր րստ կամի սղել կտրել եւ սոսկ կ'գրի վերածել արդի կը մասնիկն որ արդէն քանի մը հեղ սղած կծկած ու ամփոփման յետին սահմանը հասած է»²⁰։ Ահա ինչու արեւմտահայ ուղղագրությամբ բաղաձայնով (այդ թվում և ստ, սկ, զր և այլն հնչյունակապակցություններով) սկսվող բառերից առաջ դրվում է կը, իսկ ձայնավորով սկսվող բառերից առաջ՝ կ' (կ+ապաթարց (')), որ սղման նշան է։ Ներկայի և անցյալ անկատարի կազմության այս նոր եղանակը լայն տարածում գտավ հայ մատենագրության մեջ ընդհուպ մինչև XVIII դարը։ Լավ օրինակ է Զաքարիա Ագուլեցին (1630—1691), որ թեև արևելահայ՝ աղուլեցի, բայց օգտագործում է միջին հայերենի այս կազմությունը²¹։ Այսպես և նրա հայրենակիցը՝ Նաղաշ Հովնաթանը (1661—1722)։ Ինչպես՝ «Առաւօտուց վարդ կու քաղես (ՆՀԲ, էջ 238)։

Ջուղայեցիք անք, կու պարծենփ,
«...հոր անումըն՝ հայ կու կանչեն» (ՆՀԲ, էջ 197)։

Այսպես նաև Ղուկաս Վանանդեցու՝ որոշակիորեն Ջուղայի բարբառի կնիքը կրող 1699 թ. մի գրվածքում գտնում ենք հետևյալ կիրառությունները. «եղբայր վաճառական, յայս գրքումս ինչոր գրեցաւ վասն քաշից, դրամից՝ և դիմաթի, ժամանակաւ կու փոխվի, կամ կավելանայ, կամ կու պակսուի։ Զարա Ալիշվերիշի բանն Ածադիր կանոն չէ, որ անփոփոխ լինի, բայց փոփոխական է, և մարգագիր կանոն, և ժամանակաւոր։ Յայտնապէս միշտ, և հանապազ կու տեսնունք՝ քաշից՝ դրամից՝ և ապրանաց դիմաթի փոփոխումն»²²։ Գուցե կու փոխվի, կավելանայ, կու պակսի ձևերը դեռ կարող են ենթադրական կարծվել, սակայն կու տեսնունք ամուր ներկա է։

Կու մասնիկով ներկան ու անկատարը բացարձակ գերակշռությամբ կիրառվում են նաև հայերենի բարբառներում։ «Հայոց լեզվի պատմություն» ուսումնասիրության մեջ Հ. Աճառյանն ընդունում է հայ բարբառների 3 ճյուղի 36 բարբառներ. համապատասխանաբար՝ Կը ճյուղի՝ 24 բարբառ, Ում ճյուղի՝ 7 բարբառ, Ել ճյուղի՝ 5 բարբառ²³։ Պարզ թվաբանական հաշվով, Կը ճյուղի բարբառների թիվը կրկնակի է Ում և Ել ճյուղերի ընդհանուր թվից։ Իսկ ըստ պրոֆ. Ա. Ղարիբջանի, հայ բարբառների 7 ճյուղ կա. համապատասխանաբար՝ Կը ճյուղի՝ 24 բարբառ, Ս ճյուղի՝ 8 բարբառ, Ում ճյուղի՝ 7 բարբառ, Կա ճյուղի՝ 5 բարբառ, Լ ճյուղի՝ 2 բարբառ, Հա ճյուղի՝ 1 բարբառ և 1 միջճյուղային բարբառ։ Եթե նկատի ունենաք, որ Կա ճյուղի բարբառները ծագումնաբանորեն նույնական են Կը ճյուղի հետ, ուրեմն կունենանք կը ճյուղի 26 բարբառ, իսկ մնացած 5 ճյուղերում՝ ընդամենը 19 բարբառ։ Այսպես հաշվելով իսկ՝ Կը ճյուղի բարբառները մեկուկես անգամ ավելի են ստացվում, քան մնացած ճյուղերը միասին վերցրած։ Հայերենի բարբառներն ինչքան էլ մասնատվեն, միշտ գերակշռությունը Կը ճյուղի բարբառներինն է։

20 Տե՛ս Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 77։

21 Տե՛ս Զաքարիա Ագուլեցի, Օրագրութիւն, Երևան, 1938։

22 Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մասն Բ, Երևան, 1951, էջ 45։

23 Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., «Հայերենի բարբառները» գլուխը։

բառներինն է։ Իսկ սա ինչ որ բան նշանակում է... Ճիշտ է, որ միջին հայերենն զրականությունը ընդհանուր առմամբ մեզ ավանդված է Կիլիկիայի բարբառով, որ «թեև գաղթավայրի մի բարբառ, բայց պետականության շնորհիվ ստացավ ավելի պատվավոր դիրք և անցավ գրականության»²⁴։ Եվ պետք է ենթադրել, որ XI—XII դդ. արդեն կազմված էին Հայաստանում և Հայաստանից դուրս, գաղթավայրերում զանազան բարբառներ, իրարից ավելի կամ պակաս մեծ տարբերությամբ։ Սակայն նկատի ունենալով Կրճուղի բարբառների տարածքը և ազգային չափանիշով գործառությունը, այլև այն, որ բարբառները չէ, որ առաջանում են գրական լեզվից, այլ, ընդհակառակն, բարբառներից մեկն է բարձրանում գրական լեզվի մակարդակին, պետք է կարծել, որ գրաբարը բնականոն կերպով եկավ վերաճեց միջին հայերենի և համահայկական պետականություն ունենալու գեպքում, ուր էլ որ այն գտնվեր, «կիլիկյան բարբառով» մեզ ավանդված գրական լեզուն պիտի դառնար դարաշրջանի համայն հայության գրական լեզուն։ Այս նույն պատճառով է, որ XII—XVIII դդ. լեզվական եռքի մեջ միջին հայերեն գրականը ինչքան էլ բառական, հնչյունական, ոճական-շարահյուսական, նույնիսկ հոլովման համակարգի մեջ զգալի փոփոխություններ կրեց, սակայն իր հիմնական գծերով պահպանեց խոնարհման համակարգը, և այսօր, եթե զանց առնենք մասնակի երևույթներ, արևմտահայ գրականի խոնարհման համակարգը նման և գրեթե նույնական է միջին գրական հայերենի հետ, իսկ ներկա-անցյալ անկատար, ուստի և պայմանականի կազմության իմաստով՝ բացարձակ նույնական։

Արևմտահայ գրականում ներկան և անկատարը կազմվում են գրաբարյան համապատասխան բայաձևերի վրա կը, կ' մասնիկների ավելացումով. այս ձևերը միաթամանակ պայմանական են (հմմտ. «Եվ ձեռքին տակ պայուսակը իր կաշիի կոպիտ ու ծակոտկեն երեսովը կը դողողաւր, կ'աւրնցնէր զինքը, իրականության քով կը քաշէր կը բեւեւ, անոթի առնելիքվորի մը պես» (ԳՂՆ, էջ 84)։

«Ասպե՛տ, ասպե՛տ, մահն հասավ մեր թիկունքեն, կը շշա (=շշում է)
«...Վայրկյա՛ն մըն ալ և անոնք կուգան կ'հաւնին (=կգան կհասնեն)
մեծարշավ.

«...Ասպե՛տ, ասպե՛տ, մի՛ մատներ զիս անոնց խեռ մուրցքին»

(ԴՎԸ, էջ 284)։ Այս ձևերը պայմանականի իմաստ ունեին նաև միջին հայերենում։ Ներկան ըղձական-պայմանականի իմաստ ուներ նաև գրաբարում, որի պատճառով էլ, ինչպես վերևում ասացինք, տակնուվրա եղավ հին հայերենի խոնարհման համակարգը։

Միջին հայերենի այս մասնիկը որպես պայմանականի եղանակիչ այսօր օգտագործվում է ինչպես արևելահայ գրականում, այնպես էլ հայերենի բազմաթիվ բարբառներում։

Այսպես, ուրեմն՝ կու մասնիկով ներկա-անցյալ անկատարի կազմումով միջին հայերենը վերջնականապես սահմանազատվեց գրաբարից։ Իսկ գրաբարի ներկան ու անցյալ անկատարը միջին հայերենում մնացին որպես ստորադասականի (ըղձականի իմաստով) ձևեր, ինչպես՝

²⁴ Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մասն Բ, էջ 238։

«Արի՛ք ի ծովափն իջնունք ու ձկներ բրոնենք վարըմով.
Առնունք և ի տուն տանինք, խորովենք զինքըն կրակով» (ՀԵԲ, էջ 155):

«Այգի՛, ընդ քեզ ասեմ, տուր ինձ պատասխան,
Ընդ է՞ր ոչ պահեցեր զվարդն իմ պատուական,
«...Քակի քո ամուր պատդ, դառնաս աւերակ,
Չորնա ճուղդ ու տերեղ ծառոցդ շիտակ.
Ամէն ոտըն խաղա ի քեզ համարձակ.
Վերնա բուս ու բանձար ամէն կանաչ տակ» (ԳԱ, էջ 225):

«Ես ձագ ծիծեռնիկ պիտէի, զօրն ըզքո տուն մտնուի,
Ան բարձր մօլտան չարտախդ ես ի հոն բուն մր շինէի» (ՆՔԴ,
էջ 73):

Իսկ գրաբարի ստորագասականի 1-ին և 2-րդ ապառնիների վերացումով պայմանականի արտահայտության միջոցը կորցրեց մեր լեզուն:

Ինչպես որ գրաբարի ներկան ու անցյալ անկատարը միաժամանակ օգտագործվում էին նաև պայմանականի իմաստով, կու մասնիկով կազմված ձևերն էլ միջին հայերենում սկսեցին օգտագործվել պայմանականի իմաստով. ինչպես՝ «Ասցին, թէ մեք ի գողութիւն կու երթանք կամ արեկ ի հետ մեզ ու թէ չես ի գալ, մեք կու սպանենք զքեզ» (ՎԱԱ, II էջ 312):

Ահա այստեղից սկսած, մեր կարծիքով, մեր լեզվի զարգացման ճիշտ ու գիտական ուղին է նշել Հ. Աճառյանը իր դատողությունները զարգացնելով հետևյալ կերպ. «Գրաբարի ապառնին ջնջվելուց հետո, միջին հայերենը առանձին ապառնիից զուրկ մնաց: Անպատեհությունը վերացնելու համար անհրաժեշտ էր ուրեմն կամ առանձին ապառնի ստեղծել և կամ նոր ներկա հնարել:

Առաջին միջոցին դիմեցին արևմուտքի հայերը, որոնք ստեղծեցին պիտի ձևով ապառնի և ներկայի համար հաստատ պահեցին կը ձևը: Երկրորդ միջոցին դիմեցին արևելքի հայերը, որոնք ներկայի համար հնարեցին ում ձևը, պահելով կը ձևը ապառնիի համար, իսկ պիտի ձևը՝ պարտավորականի համար»²⁵:

Նախ -ում ձևի մասին: Աճառյանը բերում է հնագույն մի վկայություն, կիրառության մի պարագա, որից հետագայում պետք է որ առաջացած լինի -ում ձևը. «Թոթոռումն լինի ի ստուերէն եւ ի լուսոյն թուի թէ ի կուումն են ընդ իրեար. լծ. Փիլ. (հրտթ. Փիլ. հատ. Բ, էջ 239 ծան.)—թրգմ. Թոթոռումը առաջանում է լուսից և ստվերից, կարծես թե իրար հետ կովում («կովի մեջ»— Ս. Ա.) են»²⁶: Երկու էջ հետո Աճառյանը, անդրադառնալով բերված օրինակին գրում է. «Կովում եմ, խաղում եմ, վիճում եմ նշանակում են պարզապես կովի մեջ եմ, խաղի մեջ եմ, վեճի մեջ եմ» և այլն: Եվ երբ լծ. Փիլ. գրում է ի կուումն են, դեռ չգիտե, թե ինքը սահմանականի ներկա է գործածում, այլ պարզ ներգոյական, որ սակայն սահմանականի արժևք ունի»²⁷:

Միջին հայերենի 1-ին շրջանում, այն է՝ XII—XVI դդ., -ում վերջավորությունամբ անկատար դերբայաձևեր չեն հանդիպում: Այնչափով, որ այդ շրջանի

²⁵ Տե՛ս Հ. Աճառյան, Կիսկատար բերականություն, հատ. IՎբ, էջ 173:

²⁶ Նույն տեղում:

²⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 175:

գրականությունը առավելապես կիլիկյան է, պետք է կարծել, որ լինելու դեպքում էլ կարող էր չարտահայտվել:

Որպես ներկա-անցյալ անկատարի կերպարանավորված ձևեր, թվում է, նաղաշ Հովնաթանն ու Ջաքարիա Ագուլեցին առաջինն են օգտագործում -ում ձևը: Այգ կարծիքի է նաև պրոֆ. Գուրգեն Սեակը. «Բուն աշխարհաբարի նմուշներին նախորդում են նաղաշ Հովնաթանի տաղերից որոշ կտորներ իբրև միջին հայերենի ու աշխարհաբարի միջև ընկած անցողիկ լեզվի բնորոշ արտահայտություններ»²⁸: Նաղաշ Հովնաթանը և Ջ. Ագուլեցին ինչպես արդի արևելահայ գրականը, ներկա-անկատարում գործածում են ում:

«Է՞ր ես կարմիր երեսդ ծածկում:

Չարսաւդ վերադ հաւաքում,

Նաղաշին սիրտն ես տապակում» (ՆՀԲ, էջ 48):

«Շատ մարդ կոտորեցաւ ըսպահունանէ, այս պատճառէս, որ ուզում ին, թէ թագաւորն սպանին, թէ ղուլի ուլուֆայ չէ տալիս. զերայ ըսպահին թագաւորն ուզում էր, ժէնգիշարին թագաւորն ուզում չէր» (ՋԱՌ, էջ 29—31):

Ասենք նաև, որ արևելյան բարբառների մեջ և՛ տարածքի, և՛ խոսողների թվի իմաստով առաջինն է գալիս Ում ճյուղը, որ տարածված է սեկսած Հյուսիսային Կովկասից (Մոզդոկ և Ղզլար) մինչև Հին Բայազետ (Տաճկահայաստան) և Թավրիզի վրայով մինչև Նոր-Ջուղա և այստեղից էլ մինչև Հընդ-կաստան և Ջավա²⁹: (ԼՔ, հ. IV Բ, էջ 186), այն է՝ Այրարատ, Ղարաբաղ, Շամախի, Աստրախան, Նոր-Ջուղա, Ագուլիս, մասամբ նաև՝ Թավրիզ—Մոզդոկ ու Թբիլիսի: Ավելացնենք նաև, որ այդպես է իր ներգոյականը, այլև ներկան ու անկատարը կազմում արևելահայ գրական լեզուն, որի շնորհիվ էլ հատկապես վերջին կես դարում -ում-ը համազգային կիրառություն և գործառնություն ձևեր բերեց: -Ում մասնիկով սահմանականի ներկա-անցյալ անկատարը կազմելով՝ արևելահայ գրականը միջին հայերենի ձևերը պահում է միայն որպես պայմանականի ձևեր: Եվ այսօր ինչքան անորոշ է նրա մասնիկով բայաձևերի կիրառությունն արևմտահայ գրականում, նույնքան և ավելի որոշ է արևելահայ գրականում, քանի որ վերջինիս մեջ այդ իմաստները հանդես են գալիս որպես տարբեր ձևեր. ֆայլում եմ, էի—կֆայլեմ, կֆայլեի:

Ինչպիսի՞ ընդհանրացումների հիմք են տալիս վերևում բերված լեզվական փաստերը: Առաջին և ամենակարևոր եզրակացությունն այն է, որ հայերենի ներկա բարբառների գոնե խոնարհման մեջ չկա ոչինչ, որ էապես տարբեր լինի հին հայերենի խոնարհումից: Մեր խոսքն, անշուշտ, բայական համակարգի մասին է իր ամբողջության մեջ վերցրած, ամեն ինչ իր նախածեն ունի հայերենի նախորդ շրջանի մեջ: Ճիշտ է, տարբեր իմաստով, զերծ որոշակի կիրառությունից, սակայն այս կամ այն ձևի ու իմաստի վերաճելու ներունակությամբ: Արդարև, այս բոլորի գումարը չի՞ կազմում հայոց լեզվի պատմությունը: Երկրորդ՝ մեր մատենագրության ավանդած լեզվական փաստերի անկողմնակալ քննությունը ցույց է տալիս, որ իրոք, հայերենի բարբառների ճյուղերի հիմնական կերպարանավորումը պետք է եղած լինի

28 Տե՛ս Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 323:

29 Տե՛ս Հ. Աճառյան, Կիսկատար քերականություն, հատ. IV, էջ 186:

միջին հայերենի շրջանում: Ըստ Աճառյանի՝ կու-ի սահմանական-պայմանական կիրառությունները հստակեցնելու պատճառով: Սա, անշուշտ, խստորեն պայման չէր, սակայն անառարկելի է, որ լեզվամտածողության միևնույն հիմքի վրա ձևերի այդ բազմազանությունն առաջացավ ամուր և անխառն ներկա ունենալու անհրաժեշտությունից. մեր լեզուն այն ստացավ և այս անգամ արդեն իրապես զատորոշված իմաստով: Այսպես մոտենալով խնդրին՝ կարելի է առավել լավ ըմբռնել հայ բարբառների ձևաբանական դասակարգման իմաստը որպես ոչ թե միայն ձևի, այլ որպես գեղեցիկ ձև ստացած լեզվամտածողության արդյունք:

Ներկա-անցյալ անկատարի իմաստը պայմանականից զատորոշելու պատճառով էր, անշուշտ, որ հայերենի կը ճյուղի որոշ բարբառներում ստեղծվեցին ներկա-անցյալ անկատարի համար շարունակականի առանձին մասնիկներ: Ընդհանրապես այն սխալ տպավորությունը կա, որ շարունակական ունի միայն խոսակցական արևմտահայերենը, և շարունակականի միակ մասնիկն է կուր, որը և, ըստ Այտընյանի, իբր փոխառված է թուրքերենից: Վերջինս, խոսելով կու մասնիկի ծագման մասին գրում է. «Միայն արաբացի լեզուն, որ ստորին դարերու մեջ բավական ծանոթ էր մերինոնց, ունի սհմ. ներկայի և անկատարի եզ. և յբ. 3-րդ դեմքերուն սկիզբը ել կամ եու մասնիկը, որ գուցե կրնար հայանալ ըլլալ կու այնպէս՝ ինչպես նոր դարերուս մեջ եօր³⁰ տաճկերեն մասնիկն եղած է կուր»³¹: Ըստ երևույթին, Այտընյանի թյուր ենթադրությամբ պետք է բացատրել գրական արևմտահայերենի և նույնիսկ այդ մասնիկը չունեցող արևմտահայ այլ բարբառների քամահ-րանքը շարունակական այդ մասնիկի հանդեպ: Սակայն թուրքերենը շարունակական ունեցող միակ լեզուն չէ. թուրքերենին հավասար տիրական արտահայտություն ունի շարունակականը նաև անգլերենում, որ ներկա-անց-անկատարում արտահայտվում է

I am reading-I was reading

I am going-I was going

I am writing-I was writing ձևերով:

Շարունակականի որոշ իմաստ զանազան կազմություններով արտահայտում է նաև ֆրանսերենը, մասնավորապես

Je suis en train de manger—«ուտելիս եմ», կ'ուտեմ կոր

J'étais en train de manger—«ուտելիս էի», կ'ուտեի կոր:

Աճառյանը բերում է շարունակականի կազմության հետևյալ արտահայտությունները հայ բարբառներում.

Բաբերդ—կէ, էր ընկէ

Մալաթիա—ա

30 Թուրքերենի շարունակական մասնիկն է yor (յոր), ինչպես՝

veri-yor-im «տալիս եմ»

veri-yor-sin «տալիս ես»

veri-yor «տալիս է»:

31 Տե՛ս Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 76:

Շապին-Գարահիսար—տար (հնչե՛լ դար), շրջակա գյուղերում՝
դէ.
Տրապիզոն—էր
Համշեն—ունի (տեղ-տեղ նաև կունի)
Մարաշ—կօ
Արաբկիր—ընը, ցը, ք
Սեբաստիա—կօր (հնչե՛լ գօր)
Եվդոկիա—կօր
Ամասիա, Մարսվան—կա (ինչպես՝ գրէմ կա, կէրթամ կա)
Ասլաբեգ—հա՛յէ
Ատափազար—հայկակ (հնչե՛լ haygag)
Պոլիս—կօր (հնչե՛լ գօր)
Ռոտոսթո—կօր, երբեմն էլ կօ, օր³²,

Ավելին, պարզվում է, որ Տրապիզոնի բարբառը անկատարի համար նույնիսկ առանձին ձև ունի։ Ներկայի համար դրվում է էր մասնիկը, անկատարի համար՝ ունի մասնիկը³³։ Ահա ինչու ավելի ճիշտ է Աճառյանը, որ շեշտում է, թե շարունակականը հայերենում կազմվել է «տաճկերենի ազդեցությամբ, բայց ոչ փոխառությամբ»³⁴։ Իսկ ինչ տարածվածություն ունի շարունակականը։ Պարզվում է, որ շարունակականի տարբերակում չկա ո՛չ Կովկասի, ո՛չ Պարսկաստանի, ո՛չ էլ բուն Տաճկաստանի հայերեն բարբառներում։ «Երևույթն սկսվում է միայն Բաբերդից ու Մալաթիայից և առաջանում է մինչև արևմտյան սահմանը (Ռոտոսթո)։ Լեհաստանի, Հունգարիայի, Սուլավայի և Խրիմի հայերեն բարբառներն էլ չգիտեն նման ձև»³⁵։

Անցնելով հայերենի շարունակականի մասնիկների քննությանը, Աճառյանը ցույց է տալիս նրանց մեծ մասի ստույգ հայկական նյութից ձևված լինելը։ Ինչ վերաբերում է կոր մասնիկին, ապա նկատի ունենալով Ռոտոսթոյի կօ+օր, Համշենի ունի-կունի<կը+ունի ձևերը, եզրակացնում է. «Եթե այսպես է, կարող ենք նաև կարծել, որ կոր ձևացած լինի կը մասնիկի և օր մասնիկի գումարից։ Արդեն Կարնո բարբառումն էլ ...հետագայս կը մասնիկը որ շաղկապի հետ միանալով տալիս է կօր (=կ՝ օր) ձևը։ Ապագային է մնում ստուգել, թե այս օր մասնիկը, որ մտնում է կոր մասնիկի կազմի մեջ, նույն տաճկերեն yօր մասնիկն է, թե հայերեն որ շաղկապը»³⁶։

Այստեղ ուզում ենք մի ուղղում մտցնել. մեծ հայագետը, հենվելով Ալպոյաճյանի տված սխալ տեղեկության վրա, կարծում է, որ Կեսարիայի բարբառում ևս կա շարունակական, որ իբր կազմվում է կա մասնիկի լրացուցիչ կիրառությամբ։ Նա բերում է Ալպոյաճյանի վկայած հետևյալ բայերը. կա կ'ըլլա «կըլլա կոր, լինում է», կա կ'երթամ «կերթամ կոր, գնում եմ», կա կուլամ «կուլամ կոր, լալիս եմ»³⁷։

32 Տե՛ս Հ. Աճառյան, Իկատար բերականություն, հատ. IVր, էջ 97—98։

33 Տե՛ս նույն տեղում, էջ 117։

34 Տե՛ս նույն տեղում, էջ 97։

35 Տե՛ս նույն տեղում։

36 Տե՛ս նույն տեղում, էջ 108։

37 Տե՛ս նույն տեղում, էջ 105։

Սակայն Աճառյանն իսկույն նկատում է, որ բերված 3 օրինակներից երկուսը ձայնավորով են սկսվում, որոնց ներկայի (ոչ թե միայն շարունակականի) կազմության ձևն է կա կ', իսկ երրորդ օրինակը միավանկ բայ է, ուր ունենք կա կու: Նշանակում է, երևույթը կախելի է ճշտել միայն բաղաձայնով սկսվող բայերի մոտ: Իսկ Կեսարիայի բարբառում բաղաձայնով սկսվող բայերից առաջ կա-ի կրկնակի կիրառում կամ կ-ի կենտ օգտագործմամբ միմիայն շարունակականի իմաստի արտահայտություն չունենք: Կա մատնիկը Կեսարիայի բարբառի ներկա-անկատարի կազմության ընդհանուր ձևն է. այդ ընդհանուր ձևի տակ էլ, ինչպես շարունակականի հատուկ դրսևորում չունեցող այլ բարբառները, Կեսարիայի բարբառն արտահայտում է և՛ «պարզ» ներկայի (դա գիրէմ—գրում եմ—I write), և՛, ըստ անհրաժեշտության, շարունակական ներկայի (դա գիրեմ-գրում եմ-գրելիս եմ- I am writing) իմաստ:

Ներկա-անկատարի կազմության գրաբարյան ձևերը պահպանվել են հայերենի միայն մեկ բարբառում՝ խոտրջուրի բարբառում, այդ էլ մասամբ միայն, քանի որ «խոտրջուրի բարբառում միավանկ բայերը, ինչպես և ձայնավորով սկսվող բայերը ունեն ներկայում կը մասնիկի գործածությունը»³⁸: Միայն բաղաձայնով սկսվող բայե՛րը կը մասնիկ չեն ստանում, ինչպես՝ նօ՞յ տանիս «ո՞ւր ես տանում»: Այս փաստն ինքնին լավագույնս վկայում է, թե ինչպիսի՞ փոփոխության ենթարկվեցին գրաբարի ներկա-անցյալ անկատար ժամանակները:

Այս տհասակետից փոքր-ինչ տարբեր է գրաբարի մի քանի անկանոն և պակասավոր բայերի ներկա-անցյալ անկատար ժամանակների կիրառության ճակատագիրը: Եմ, կամ, գիտեմ, ունիմ, արժեմ բայերը և միջին հայերենում, և՛ արևելահայ ու արևմտահայ գրական լեզուներում չեն ենթարկվում ներկա-անցյալ անկատարի կազմության վերևի կանոններին, այլ օգտագործվում են իրենց նախնական ձևերով: Այսպես նաև կարամ բայը արևելահայ գրականի խոսակցական տարբերակում: Այս իմաստով սխալ և ոչ հանձնարարելի ձևեր են գիտեմ, արժեմ բայերի ներկայի եզակի 3-րդ դեմքի գիտի, արժի ձևերը, որոնք պարզապես ըղձականի համապատասխան ձևերի հետևողությունամբ սխալ կիրառություններ են: Եվ կարիք չկա այդ սխալ ձևերին՝ «ընդհանրացած են» արդարացումով տեղ տալ դասագրքերում և գիտական աշխատություններում: Արևմտահայ գրականում այդ ձևերը ճիշտ են օգտագործվում: Ուրիշ է, սակայն, ունի բայաձևը. սա իր բուն ի խոնարհման ձևն է. ունիմ, ունիս, ունի. ձևեր, որոնք ընդհանրական էին դեռ կես դար առաջ և նույնիսկ այսօր էլ կիրառական հին սերնդի ներկայացուցիչների կողմից:

Թե՛ արևելահայ և թե՛ արևմտահայ գրականում պահպանվել են նաև գրաբարյան ներկայի որոշ կազմություններ, որոնք ավելի շուտ եղանակավորող բառեր են, ինչպես՝ կարծեմ, կարծես, երևի:

Վերջերս ընդհանրացած է նաև խնդրեմ ձևը: Արևմտահայ գրականում սրա փոխարեն օգտագործվում է կ'աղաչեմ ձևը: Եթե ընդունենք, որ խնդրեմ ուս. որովայն բառի համապատասխան կիրառության հետևողությամբ է կազմված, ուրեմն առավել քան հաստատվում է նրանում ներկայի իմաստը:

38 Տե՛ս նույն տեղում, էջ 104:

Այս բոլորից դուրս, լեզուններում ներկան և անցյալ անկատարն ունեն նաև հետևյալ կիրառությունը. օգտագործվում են անցյալում տեղի ունեցած դեպքերի մասին պատմելիս, որոնք թեև այժմ չկան, բայց այն չափով, որ պատմողը դրանց մասին այժմ է խոսում, չի օգտագործում անցյալ, այլ ներկա կամ անցյալ անկատար: Սա պատմական ներկա և անցյալ կոչվածն է, որ գտնում ենք դրական հայերենի բոլոր դրսևորումներում. ինչպես գրաբար. «Ասեն մոգքն. «Արքայ քաջ...» (Եղիշե, էջ 9): Միջին հայերենով. «Այս քանի տարի կայ, որ կոյ վարեմ եւ կոյ վաստակիմ, զհատն դու կոյտես եւ զարդն ինձի կոյ կերցնես» (ՎԱԱ, II, էջ 115):

Այս ձևերը իմաստով նույնական են աշխարհաբարի հետևյալ ձևերի հետ.

«Աբովյանն ասում է», «Շիրվանդադեն գրում է» և այլն:

Ներկա-անցյալ անկատարի մնացած իմաստային կիրառությունները ևս նույնական են մեր լեզվի բոլոր դրսևորումներում:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Բուդ.—Փաւստոսի Բիւղանդացւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912:
2. ԳԱ.—Գրիգորիս Աղթամարցի, Ուսումնասիրություն, քննական բնագրեր և ծանոթագրություններ Մ. Ավդալրեգյանի, Երևան, 1963:
3. ԳՁն.—Գրիգոր Զոհրասլ, Նովելներ, Երևան, 1954:
4. Գրիգորիս Քնն.—Գրիգորիս, Քննություն բնութեան մարդոյ եւ նորին ցաւոց, Երևան, 1955:
5. ԴՎԲ.—Դանիել Վարուժան, Բանաստեղծություններ, Երևան, 1955:
6. Եբր.—Թուղթ առ Եբրայեցիս (Նոր կտակարան):
7. Եզնիկ—Եզնիկայ վարդապետի Կողբացւոյ Եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914:
8. Եղիշե—Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, աշխատասիրութեամբ Ե. Տէր-Մինասեան, Երևան, 1957:
9. Եսայի—Եսայի (Հին կտակարան):
10. ԶԱՕ.—Զաքարիա Ագուլեցի, Օրագրութիւն, Երևան, 1938:
11. Թուղթ առ Գաղ.—Թուղթ առ Գաղատացիս (Նոր կտակարան):
12. I թուղթ առ Կորնթ.—Թուղթ առ Կորնթացիս Ա (Նոր կտակարան):
13. II թուղթ առ Տիմ.—Թուղթ առ Տիմոթէոս Բ (Նոր կտակարան):
14. Խոր.—Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տիֆլիս, 1913:
15. ԿԵԲ.—Կոստանդին Երզնկացի, Տաղեր, աշխատասիրութեամբ Ա. Սրապյանի, Երևան, 1962:
16. ՀԵԲ.—Հովհաննէս Երզնկացի, Բանաստեղծություններ, Երևան, 1958:
17. Մատթ.—Աւետարան ըստ Մատթէոսի (Նոր կտակարան):
18. ՄՀԶՄ—Մխիթար Հերացի, Ջերմանց մխիթարութիւն, Վենետիկ, 1832:
19. Յայտն.—Յայտնութիւն Յովհաննու (Նոր կտակարան):
20. ՆՀԲ.—Նաղաշ Հովնաթան, Բանաստեղծություններ, Երևան, 1951:
21. ՆՇԲԶ—Ներսէս Շնորհալի, Բանք չափաւ, Վենետիկ, 1830:
22. ՆՔԴ.—Նահապետ Քուլակ, Դիւան, Փարիզ, 1902:
23. II Պետ.—Թուղթ Պետրոսի առաքելոյ Բ (Նոր կտակարան):
24. Սաղ.—Գիրք սաղմոսաց (Հին կտակարան):
25. ՍԳԴ.—Սմբատ Գունդստապլ, Դատաստանագիրք, էջմիածին, 1918:
26. ՎԱԱ—Վարդան Այգեկցի, Ժողովածոյք առական Վարդանայ, մասն Բ, աշխատասիրութեամբ Ն. Մառի, Ս. Պետերբուրգ, 1894:
27. ՖԴ—Ֆրիկ, Դիւան, ի լոյս ընծայեց Տիրալր արքեպիսկոպոս, Նիւ-Եորք, 1952:

ИСТОРИЧЕСКИЕ ИЗМЕНЕНИЯ НАСТОЯЩЕГО И ПРОШЕДШЕГО ВРЕМЕН ИЗЪЯВИТЕЛЬНОГО НАКЛОНЕНИЯ

С. М. АНТОСЯН

(Резюме)

В статье исследуются исторические изменения выражений настоящего и прошедшего времен в грабаре. Указанные глагольные формы времен в период возникновения письменности армянского языка (V в.) употреблялись в функции конъюнктива (сослагательного, условного и побудительного); ср., например, *սիրեմ, սիրէի=սիրուի եմ, սիրուի էի, —սիրեմ, կսիրեմ, պիտի սիրեմ, սիրեի, կսիրեի, պիտի սիրեի*.

В соответствии с тем, что язык стремится к упрощению глагольных временных выражений, в среднеармянском языке (XII в.) вышеуказанные глагольные формы грабара трансформировались в формы сослагательного наклонения. На этой базе армянский язык образовал новые формы выражения настоящего и прошедшего времен:

1. В западноармянских диалектах формы настоящего и прошедшего времен образовались с добавлением к идентичным формам грабара частиц *իւ, ին, իր*.

2. В восточноармянских диалектах — деепричастной формой глагола с основой на *-ուի* плюс вспомогательный глагол.

Таким образом, формы настоящего и прошедшего времен грабара не только были полностью изменены, но и обусловили коренное изменение системы спряжения грабара. В период функционирования среднеармянского языка (XII—XVII вв.) эти глагольные формы грабара употреблялись в качестве архаизмов, а в ашхарабаре и в армянских диалектах они сохранились лишь как застывшие формы архаизмов. В армянских диалектах, числом более 50-ти, лишь в диалекте Хотрджура частично сохранилась форма настоящего и прошедшего времен грабара.